Հաստատված է՝
ՀՀ փաստաբանների պալատի նախագահ
Արա Զոհրաբյանի 14.02.2014թ. թիվ 46-Լ որոշմամբ

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգն ընդունվել է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) 13-րդ հոդվածի ութերորդ մասի 12-րդ և 15-րդ կետերի պահանջներին համապատասխան և սահմանում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) հանրային պաշտպանի գրասենյակին հասցագրված դիմումների ընդունման, հաշվառման, քննարկման, լուծման և որոշումների հաշվառման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգի իմաստով դիմում է համարվում քրեական վարույթն իրականացնող մարմնի դիմումը (որոշումը) կամ Օրենքի 41-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում քաղաքացու դիմումը:

II. ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

3. Պալատի հանրային պաշտպանի գրասենյակին հասցեագրված բոլոր դիմումներն ենթակա են ընդունման և հաշվառման: Դիմումները հաշվառվում են դրա համար հատուկ նախատեսված գրանցամատյանում

(**այսուհետ՝ թիվ 1 գրանցամատյան**): Գրանցամատյանի էջերը համարակալում և կնքում է Պալատի նախագահը: Գրանցամատյանի հաշվառումն իրականացնում է Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի ավագ օգնականը, իսկ հաշվառման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը:

4. Օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասում նշված քաղաքացիներին (բացառությամբ դատապարտյալների և հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձանց) տրամադրվում է համապատասխան դիմում-ձևաթուղթ (**հավելված 1**), որը լրացվում և ստորագրվում է վերջիններիս կողմից:
5. Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը դիմումի հիման վրա պարտավոր է երեք աշխատանքային օրվա ընթացքում ընդունել որոշում՝ դիմումը բավարարելու և հանրային պաշտպան նշանակելու մասին կամ դիմումը մերժելու մասին, բացառությամբ սույն կարգի 6-րդ կետում և IV-րդ բաժնում նշված դեպքերի:
6. Քրեական գործերով անհապաղ լուծում պահանջող դեպքերում Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը դիմումի հիման վրա պարտավոր է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ընդունել որոշում՝ դիմումը բավարարելու և հանրային պաշտպան նշանակելու մասին կամ դիմումը մերժելու մասին:
7. Դիմումը մերժելու մասին Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի որոշումը պետք է լինի պատճառաբանված: Դիմումը կարող է մերժվել Օրենքով և Պալատի ու ՀՀ արդարադատության նախարարության միջև կնքված պայմանագրով նախատեսված դեպքերում:
8. Մարզերում գործող հանրային պաշտպանների միջոցով ստացված դիմումները ընդունվում, հաշվառվում և քննարկվում են նույն կարգով՝ հաշվի առնելով սույն կետում նշված առանձնահատկությունը: Մարզում գործող հանրային պաշտպանի միջոցով դիմումն ուղարկվում է էլեկտրոնային փոստի կամ հեռապատճենի միջոցով և այդ կարգով ստացման պահից համարվում է հասցեագրված հանրային պաշտպանի գրասենյակին: Մարզում գործող հանրային պաշտպանը պարտավոր է ողջամիտ ժամկետում հանրային պաշտպանի գրասենյակ ուղարկել դիմումի բնօրինակը: Սույն առանձնահատկությունը գործում է նաև մարզերում գործող վարույթ իրականացնող մարմնի հետ

փոխհարաբերություններում, ինչպես նաև Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի կողմից անհետաձգելի համարվող դեպքերում:

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

9. Սույն կարգով նախատեսված Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի որոշումներն ենթակա են առանձին հաշվառման: Որոշումները հաշվառվում են դրա համար հատուկ նախատեսված գրանցամատյաններում: Գրանցամատյանների էջերը համարակալում և կնքում է Պալատի նախագահը: Գրանցամատյանի հաշվառումն իրականացնում է Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի ավագ օգնականը:
10. Նախաքննության փուլում հանրային պաշտպան նշանակելու մասին որոշումները հաշվառվում են թիվ 2 գրանցամատյանում (**այսուհետ՝ թիվ 2 գրանցամատյան**):
11. Քրեական գործերով առաջին ատյանի դատարանում հանրային պաշտպան նշանակելու մասին որոշումները հաշվառվում են թիվ 3 գրանցամատյանում (**այսուհետ՝ թիվ** 3 **գրանցամատյան**):
12. Քրեական գործերով վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում հանրային պաշտպան նշանակելու մասին որոշումները հաշվառվում են թիվ 4 գրանցամատյանում (**այսուհետ՝ թիվ** 4 **գրանցամատյան**):
13. Հանձնման և քրեական այլ գործերով հանրային պաշտպան նշանակելու մասին որոշումները հաշվառվում են թիվ 5 գրանցամատյանում (**այսուհետ՝ թիվ** 5 **գրանցամատյան**):
14. Քաղաքացիական կամ վարչական գործերով առաջին ատյանի դատարանում հանրային պաշտպան նշանակելու մասին որոշումները հաշվառվում են թիվ 6 գրանցամատյանում (**այսուհետ՝ թիվ** 6 **գրանցամատյան**):
15. Քաղաքացիական կամ վարչական գործերով վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում հանրային պաշտպան նշանակելու մասին որոշումները հաշվառվում են թիվ 7 գրանցամատյանում (**այսուհետ՝ թիվ** 7 **գրանցամատյան**):
16. Սահմանադրական գործով կամ գրավոր խորհրդատվությամբ հանրային պաշտպան նշանակելու մասին որոշումները հաշվառվում են թիվ 8 գրանցամատյանում (**այսուհետ՝ թիվ** 8 **գրանցամատյան**):

17. Պալատի հանրային պաշտպանի ղեկավարը յուրաքանչյուր փուլի համար կայացնում է առանձին որոշում:
18. Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի որոշումը պետք է ունենա հերթական համար և «Ա» տառի նշում: Որոշումների համարակալումը վերսկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից:
19. Օրենքի 41-րդ հոդվածի 6-րդ մասում նշված իրավաբանական օգնություն տրամադրելը բացառող փաստերի ի հայտ գալու դեպքում Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը պարտավոր է որոշում կայացնել հանրային պաշտպան նշանակելու մասին որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին (**այսուհետ՝ Դադարեցման որոշում**): Սույն կետում նշված որոշումը հաշվառվում է համապատասխան գրանցամատյանում: Դադարեցման որոշման համարակալումը կատարվում է հետևյալ կերպ՝ նշվում է ուժը կորցրած ճանաչված որոշման համարը, կոտորակ 1 նշագրմամբ, ինչպես նաև «Ա» տառը:
20. Որոշման օրինակներից մեկն ընդունման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ ի գիտություն:

IV. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

21. Իրավաբանական տեղեկատվության տրամադրման դիմումների դեպքում Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը առանձին ակտի ձևով որոշումներ չի կայացնում:
22. Իրավաբանական տեղեկատվության տրամադրման համար դիմած քաղաքացուն տրամադրվում է համապատասխան դիմում-ձևաթուղթ (**հավելված** 2), որը լրացվում և ստորագրվում է վերջինիս կողմից: Նշված ձևաթղթի վրա Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը կամ ղեկավարի տեղակալը մակագրություն է կատարում խորհրդատվություն տրամադրելու կամ դիմումը մերժելու մասին: Դիմումը մերժելու դեպքում, քաղաքացու գրավոր պահանջով մեկ աշխատանքային օրվա ընթացքում նրան է ուղարկվում մերժման պատճառաբանությունը:
23. Իրավաբանական տեղեկատվության տրամադրման դիմումները հաշվառվում են դրա համար հատուկ նախատեսված թիվ 9 գրանցամատյանում (**այսուհետ՝ թիվ** 9 **գրանցամատյան**):

V. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

24. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2014 թվականի փետրվարի 24-ից:
25. Սույն կարգով նախատեսված Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի որոշումների համարակալումը սկսվում է 2014թ. փետրվարի 24-ից:
26. Սույն կարգը կարող է փոփոխվել կամ լրացվել Պալատի նախագահի որոշմամբ: